

Բարև բոլորին: Ես Ալինան եմ: Ես 19 տարեկան եմ և սովորում եմ Արցախի Պետական Համալսարանում: Ես ուսումնասիրում եմ հայոց լեզու և գրականություն: Ես Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղից եմ, գյուղը մեր վերահսկողության տակ է, այն մեծ չէ, բայց ունի հիանալի բնություն և գեղեցիկ հուշարձաններ: Գյուղում կա դպրոց, որտեղ ուսում են ստանում մոտ 100 աշակերտներ: Կա նաև Հայրենական պատերազմի գոհերին նվիրված հուշարձան: Ես շատ եմ սիրում իմ գյուղը, մարդիկ այնտեղ զբաղվում են անասնապահությամբ և այգեգործությամբ: Պատերազմից հետո շատ մարդիկ դարձան գործազուրկ, որոշները սկսեցին զբաղվել առևտրով:

Գյուղում կան գեղեցիկ վայրեր, ինչպիսիք են՝ «Արցախ աղբյուր»-ը, «Նուվափուր աղբյուր»-ը և այլն:

Ես շատ եմ սիրում իմ գյուղը, այն հիանալի վայր է:

Ալինա, 19